ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
«ԻՄ ՔԱՅԼԸ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄԸ

2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 06-ԻՆ, ԺԱՄԸ 18:30-ԻՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՂՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԾ ՕՐԱԿԱՐԳՈՎ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ

ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԸ ԵՐԿՈՒ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԽՈՐՀՐԴԻՆ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ մասով և 7-րդ մասի 2-րդ կետով «Իմ քայլը» խմբակցությունը որոշում է.

ՀՀ Ազգային ժողովի խորհրդին ներկայացնել միջնորդություն՝

1) ««Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և հարակից օրենքների նախագծերի փաթեթն (Խ-894-09.03.2021-ՊԻ-011/0) առաջին ընթերցմամբ, ինչպես նաև այդ նախագծերի փաթեթը երկրորդ ընթերցմամբ քննարկելու և ՀՀ Ազգային ժողովի արտահերթ նիստ գումարելու վերաբերյալ:

0095, Երևան, Ք. Բաղրամյանի պող. 19, Հեռ.՝ (374 11) 513 281

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Յոթերորդ գումարման Ազգային ժողովի գործունեության մեկնարկից հետո ՀՀ Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյանի նախաձեռնությամբ ստեղծվեց ընտրական բարեփոխումների աշխատանքային խումբ, որի կազմում էին բոլոր երեք խմբակցությունների ներկայացուցիչները:

Աշխատանքային խմբի աշխատանքներին մաս է կազմել նաև խորհրդատվական մարմինը, որին մասնակցել են գործադիր ճյուղի գերատեսչությունները (ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ ոստիկանություն, ՀՀ տարածքային կառավարման նախարարություն), ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը: Ընտրական օրենսգրքի նախագծի մշակման աշխատանքներին ակտիվորեն մասնակցել են նաև համապատասխան փորձառություն ունեցող հասարակական կազմակերպություններ, միջազգային կազմակերպություններ և փորձագետներ: Աշխատանքային խմբի աշխատանքների առաջնահերթությունները և գործողությունների պլանը քննարկվել և ամփոփվել են 2019թ. հունիսի աշխատաժողովում, որի ներկա են եղել նաև ԵԽ ՎՀ և ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի ներկայացուցիչները: Աշխատանքային խմբի գործունեության ընթացքում մշակվել և Ազգային ժողովում նաև ընդդիմության կողմ քվեով 2019 թվականի հունիսին միաձայն ընդունվել է «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը (տեղական ինքնակառավարման մարմինների մասով), իսկ 2020 թվականի դեկտեմբերի 29-ին՝ նաև «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որը նախատեսված է եղել նախապես ընդունված գործողությունների ծրագրով:

Նույն ծրագրով Ընտրական օրենսգրքում փոփոխությունների հաջորդ փուլի իրականացումը ծրագրված էր իրականացնել մինչև 2021 թվականի սկիզբ՝ նախատեսված հանրաքվեի միջոցով իրականացվելիք սահմանադրական փոփոխություններից հետո, որոնք սակայն հետաձգվեցին նախ համավարակի, իսկ հետո նաև ադրբեջանական ռազմական ագրեսիայի պատճառով:

Ընտրական օրենսգրքում փոփոխությունների փաթեթի նախապատրաստման աշխանատնքները մեկնարկել էին դեռ 2020 թվականի ամռանը: Տեղի են ունեցել մի շարք քննարկումներ՝ ներառյալ 5 առցանց հանրային քննարկումներ: Նախագծի մշակման ընթացքում դիտարկվել են Վենետիկի հաձնաժողովի 2016թ.ներկայացրած դիտարկումները, ինչպես նաև 2018թ. փոփոխությունների նախաձեռնման ընթացքում ներկայացված առաջարկություններն ու մոտեցումները:

2021 թվականի սկզբին ««Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», օրենքի նախագծի նախնական տարբերակը ներկայացվել է խորհրդարանական և արտախորհրդարական ուժերի քննարկմանը, իսկ մարտ 4-ին «Իմ քայլը» դաշինքի հեղինակությամբ շրջանառության դրվել: Միաժամանակ նախագծի փաթեթը ուղարկվել է ԵԽ ՎՀ և ԵԱՀԿ ԺՀՄԻԳ՝ հրատապ համատեղ կարծիքի: Սույն կարծիքը ստացվել է ապրիլի 22-ին:

Հայաստանի Հանրապետության ներքաղաքական լարվածությունը ժողովրդավարական եղանակով լուծելու նպատակով մարտի 18-ին խորհրդարական ուժերի միջև ձեռք բերված համաձայնությունը՝ հունիսի 20-ին արտահերթ խորհրդարանական ընտրություններ անցկանցելու վերաբերյալ, առավել կարևոր դարձրեցին մշակված նախագծերի փաթեթի ընդունումը:

Կարևորելով նախագծերի փաթեթում տեղ գտած էական կարևորություն և հանրային ու քաղաքական լայն աջակցություն ունեցող դրույթների օր առաջ ընդունումը՝ նախագծերի փաթեթից նախ առանձնացվեց և 2021 թվականի ապրիլի 1-ին Ազգային ժողովի կողմից ընդունվեց խորհրդարանական ընտրությունների համար պարզ համամասնական ընտրակարգը նախատեսող դրույթները, իսկ 2021 թվականի ապրիլի 28-ին ընդունվեցին նաև ընտրական խախտումների տեսակների և պատժամիջոցների հետ կապված Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում և Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում համապատասխան փոփոխությունները:

Նախագծերի մնացյալ կարգավորումների ընդունման հրատապությունը պայմանավորված է նախքան արտահերթ ընտրությունների նշանակումը ընտրական գործընթացում բարելավումներ կատարելու և ոլորտում առկա խնդիրները հնարավորինս շտկելու հանգամանքներով:

Նախագծերի փաթեթի ընդունմամբ ակնկալվում է հետևյալ խնդիրների լուծումը՝

1. ընտրական գործընթացների պատշաճ կազմակերպման հնարավորություն,
2. քաղաքացիների ազատ կամարտահայտման նկատմամբ ապօրինի ազդեցության գործադրման բացառում,
3. նախընտրական քարոզարշավի ընթացքում հավասար հնարավորությունների ապահովում բոլոր կուսակցությունների համար,
4. նախընտրական քարոզարշավի ֆինանսական թափանցիկության ապահովում,
5. խորհրդարանի ձևավորման առավել ժողովրդավարական և ներկայացուցչական կանոնների սահմանումը,
6. պակաս ներկայացված սեռի՝ առավել բարձր ներկայացվածության երաշխիքներ խորհրդարանում և ավագանու կազմում,

7. հաշմանդամություն ունեցող անձանց համար ընտրական գործընթացի մատչելիության ապահովում,

8. ընտրությունների արդյունքների վրա՝ ֆինանսական միջոցների ազդեցության նվազման, կուսակցությունների և պետության նույնացման բացառման, քարոզարշավի ծախսերի թափանցիկության և վերահսկելիության միջոցով քաղաքացիների տեղեկացված և ազատ կամարտահայտման հնարավորության ապահովում,

9. ազատ և արդար ընտրությունների ապահովում:

«ԻՄ ՔԱՅԼԸ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ Լ. ՄԱԿՈՒՆՑ

06.05.2021թ.

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

ՈՐՈՇՈՒՄԸ

2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 06-ԻՆ, ԺԱՄԸ 18:30-ԻՆ ԳՈՒՄԱՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐՑԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՏՈՒԿ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

1.Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 41-րդ հոդվածի 6-րդ մասը Ազգային ժողովը ՈՐՈՇՈՒՄ Է.

1) Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների առնվազն մեկ քառորդի նախաձեռնությամբ 2021թ-ի մայիսի 06-ին, ժամը 18:30-ին գումարված Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի արտահերթ նիստի օրակարգում ընդգրկված նախագծերի փաթեթի երկրորդ ընթերցմամբ քննարկումը կազմակերպել առաջին ընթերցմամբ դրա ընդունումից հետո՝ 24 ժամվա ընթացքում:
2) Առաջին ընթերցմամբ ընդունված նախագծերի փաթեթի վերաբերյալ գրավոր առաջարկները, ինչպես նաև գլխադասային հանձնաժողովի եզրակացությունը ներկայացնելու համար սահմանել վեցական ժամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ա. ՄԻՐԶՈՅԱՆ**

2021 թվական, մայիսի —